ՀԱՐԳԱԼԻՑ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԿԱՆՈՆ

Ինչո՞ւ է անհրաժեշտ «Հարգալից միջավայրի կանոնը»

Վիքիմեդիա Հայաստանն իր տարածքում և Վիքիմեդիա միջոցառումների մասնակիցների համար ձգտում է ապահովել անվտանգ, խտրականությունից և ամենատարբեր ոտնձգություններից զերծ, հարգալից և դրական միջավայր: Վիքիմեդիա շարժման գլխավոր սկզբունքներից է բացությունը և ներառականությունը, որոնց կարելի է հասնել միայն շարժման բոլոր մասնակիցների՝ իրենց անվտանգ զգալու պարագայում:

Միջոցառման մասնակիցները պետք է հարգալից վերաբերվեն բոլորին՝ անկախ արտաքին տեսքից, ռասայից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, դավանանքից, սեռից, սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից, հաշմանդամությունից, աշխարհայացքից և այլ կարգավիճակից: Մենք չենք հանդուրժում որևէ ոտնձգություն մարդու արժանապատվության դեմ:

Ի՞նչ է մեզ համար ոտնձգությունը

Ոտնձգությունը ներառում է, բայց չի սահմանափակվում մարդու հաշմանդամության, արտաքին տեսքի, ռասայի, էթնիկական կամ սոցիալական ծագման, դավանանքի, սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, աշխարհայացքի, քաղաքական պատկանելիության և այլ հատկանիշների հանդեպ արված վիրավորական արտահայտություններով: Մեր միջավայրում արգելվում է նաև այլ մասնակիցներին ահաբեկելը, հետապնդելը, վիրավորական լուսանկարներ և ձայնագրություններ պատրաստելը, քննարկումները և միջոցառումները մտադրված խանգարելը:

Միջոցառման կազմակերպիչները պետք է կանխեն ցանկացած մասնակցի այսպիսի պահվածքը: Կանոնները խախտողները միջոցառման կազմակերպիչների հայեցողությամբ կզգուշացվեն կամ կհեռացվեն միջոցառումից:

Ո՞ւմ պետք է տեղեկացնել խախտման դեպքում

Ոտնձգությունը ներառում է, բայց չի սահմանափակվում մարդու հաշմանդամության, արտաքին տեսքի, ռասայի, էթնիկական կամ սոցիալական ծագման, դավանանքի, սեռի, սեռական կողմնորոշման, գենդերային ինքնության, աշխարհայացքի, քաղաքական պատկանելիության և այլ հատկանիշների հանդեպ արված վիրավորական արտահայտություններով: Մեր միջավայրում արգելվում է նաև այլ մասնակիցներին ահաբեկելը, հետապնդելը, վիրավորական լուսանկարներ և ձայնագրություններ պատրաստելը, քննարկումները և միջոցառումները մտադրված խանգարելը:

Միջոցառման կազմակերպիչները պետք է կանխեն ցանկացած մասնակցի այսպիսի պահվածքը: Կանոնները խախտողները միջոցառման կազմակերպիչների հայեցողությամբ կզգուշացվեն կամ կհեռացվեն միջոցառումից:

WIKIMEDIA ARMENIA

https://am.wikimedia.org/wiki/Հարգալից_միջավայրի_կանոն